

Դրամաշնորհային հաշվետվություն N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Տնային խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար»
Դրամաշնորհի N	Լոտ 1-Երևան
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ ԱՍՀՆ
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01/01/2022թ. - 31/12/2022թ
Հաշվետու ժամանակահատված	01/01/2022թ. - 31/12/2022թ
Ներկայացման օր	08.04.2022թ.
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Ալլա Հարությունյան Ծրագրի ղեկավար/համակարգող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար սահմանված են հետևյալ գործողությունները.

- Կարիքների գնահատում
- Շահառուի սոցիալական վերականգնման անհատական ծրագրի կազմում
- Կենցաղային սպասարկման ծառայությունների տրամադրում
- Շահառուների սոցիալական կարողությունների և հմտությունների, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների ուսուցանում և զարգացում
- Կերակրի պատրաստման, կերակրման կամ բարեգործական ճաշարանի կերակրի տուն բերման ծառայությունների տրամադրում՝ ըստ ռեսուրսի
- Շահառուին ուղեկցում անհրաժեշտ վայրեր, բժշկական հաստատություններ
- Շահառուի անձնական հիգիենայի պահպանման հետ կապված ծառայությունների տրամադրում
- Աշխատանքային թերապիայի, արտթերապիայի կազմակերպում
- Անհատական հոգեբանական օգնության տրամադրում
- Սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնության տրամադրում շահառուին
- Սոցիալ-հոգեբանական խորհրդատվական օգնություն ցուցաբերում ընտանիքին
- Հոգեբույժի պարբերական հսկողության և խորհրդատվության տրամադրում
- Շահառուի դեղերի ստացում և տրամադրում շահառուին՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղերի ճիշտ և ժամանակին ընդունման մշտադիտարկում
- Բարդ դեպքերի քննարկում, հաջորդ ամսվա աշխատանքների պլանավորում
- Փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում
- Միջոցառումների իրականացում՝ ուղղված անձանց սոցիալական ներառմանը, համայնքային կյանքին մասնակցությանը,
- Բժշկական օգնության կազմակերպում
- Իրավաբանական աջակցության տրամադրում, իրավունքի ոտնահարման դեպքերի բացահայտում և իրավաբանական խորհրդատվության տրամադրում
- Թիմային քննարկումներ
- Դասընթացներ մասնագետների համար
- Սուպերվիզիոն ծառայություն

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Նախքան ծրագրային գործողությունների իրականացումը ծրագրի հիմքում ընկած արժեքները և սկզբունքները քննարկվել են անձնակազմի հետ: Մշակվել է շահառուների կարիքների

գնահատման, սոցիալական վերականգնման անհատական ծրագրի ձևաչափը, որի հիմքով կատարվել է շահառուների սոցիալ-հոգեբանական, ինչպես նաև հոգեբուժական կարիքների գնահատումը: Արդյունքում, շահառուների գերակշիռ մասի համար կազմվել են սոցիալական վերականգնման անհատական ծրագրեր, որի հիմքով էլ տրամադրվել են այն ծառայությունները, որոնց կարիքն ունեցել են շահառուները:

Շահառուների գերակշիռ մասը ստացել են կենցաղային սպասարկման, կերակրի պատրաստման (անհրաժեշտության դեպքում՝ կերակուրը ճաշարանից տուն տանելու) հարցերում աջակցություն՝ սոցիալական սպասարկողների կողմից: Հիգիենայի պահպանման հարցերում տրամադրվող աջակցությունը ենթադրել է մարմնի մասնակի լվացման, խոնավ մաքրման, ինքնախնամքի հարցերում աջակցություն, բնակարանի մաքրում, ամանների լվացում և անկողնու հարդարում:

Շահառուների մեծ մասը սոցիալական աշխատողների և բուժքույրերի կողմից ուղեկցվել են անհրաժեշտ վայրեր (20 անձանց ուղեկցում), բուժհաստատություններ (19 անձանց ուղեկցում), որը հաշվետու ժամանակահատվածում հիմնականում ներառել է պոլիկլինիկա, բժշկական կենտրոններ ուղեկցումներ, ինչպես նաև կազմակերպվել է նեղ մասնագետի կողմից տնային այցելություն այն շահառուների համար, ովքեր տեղաշարժման դժվարություններ ունեն: Շահառուները հիմնականում օգտվել են ակնաբույժի, վարակաբանի, նյարդաբանի, թերապևտի, մաշկաբանի աջակցությունից:

Դեղորայքի մշտադիտարկումը ներառել է դեղորայքի պիտանելիության ժամկետների ստուգումը, հոգեմետ դեղորայքի ընդունման ժամկետների վերահսկումը, ինչպես նաև դեղորայքի վերաբերյալ խորհրդատվությունը, իսկ դեղորայքի ստացում և տրամադրում իրականացվել է 18 անձանց համար:

Սոցիալական կարողությունների և հմտությունների, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների ուսուցանման հարցերում աջակցություն է ստացել 10 անձ, որն իրականացվել է հիմնականում սոցիալական աշխատողի և բուժքրոջ կողմից: Աջակցությունը ներառել է անհատական խորհրդատվություններ տրանսպորտից օգտվելու, տարածքում կողմնորոշման, բյուջեի կառավարման հարցերում, խոհանոցային հմտությունների, համակարգչից օգտվելու հարցերում, ինչպես նաև աշխատանքային հնարավորությունների ուսումնասիրություն (արդյունքում 1 շահառու աշխատանքի է անցել):

Շահառուներից 23-ը բժշկական աջակցություն են ստացել, որը հիմնականում ներառել է զարկերակային ճնշման չափում, դեղորայքային խորհրդատվություն, քնի կարգավորման խորհրդատվություն, շտապ օգնության կանչ (հիվանդանոց տեղափոխություն), 2 շահառուի ներարկում է իրականացվել, ինչպես նաև ներկայացվել են անվճար դեղորայքի ստացման ընթացակարգերը:

Շահառուներից 17-ի համար կազմակերպվել են սոցիալական ներառմանը և համայնքային կյանքին մասնակցության միջոցառումներ. «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ցերեկային կենտրոններում կազմակերպված միջոցառումներին մասնակցություն, տարբեր խմբերում ներառում՝ ուղղված առողջ ապրելակերպի խթանմանը, օրացույցով սահմանված տոները նշելուն, ոչ ֆորմալ ցանցի ընդլայնմանը, վարսավիրական ծառայությունների ստացմանը:

Կարիքների գնահատման նախնական արդյունքների վրա հիմնվելով՝ կազմակերպվել են հոգեբանական անհատական խորհրդատվություն, խմբային հանդիպումներ, ինչպես նաև

տրամադրվել է հեռախոսային հոգեբանական կարճատև խորհրդատվություն: Հոգեբանների կողմից իրականացվող աշխատանքում կիրառվել են հետևյալ թերապիաները. արտթերապիա, ընտանեկան թերապիա, կոլաժաթերապիա, մանդալաթերապիա:

Հաշվետու ժամանակահատվածում, հոգեբույժը այցեր է կատարել, շահառուների հոգեբուժական կարիքների գնահատում է իրականացրել, անհատական վերականգնողական պլաններում նշումներ է կատարել, խորհրդատվություն է տրամադրել, որից հետո բարդ դեպքերը քննարկվել են բազմամասնագիտական թիմում:

Անձնակազմի աշխատանքային կոմպետենցիաները զարգացնելու, հոգեկան առողջության ոլորտի հանդեպ զգայունությունը բարձրացնելու նպատակով իրականացվել են 4 հանդիպում-դասընթացներ՝ հոգեբույժի և սուպերվիզորի կողմից: Հանդիպումները միտված են եղել ծրագրում ներգրավված անձնակազմին ներկայացնել հոգեկան առողջության ոլորտի զարգացման պատմությունը, միջազգային և ներպետական կարգավորումները, շահառուների շահերը և իրավունքները, ինչպես նաև քննարկել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները, էթիկական սկզբունքները: Բացի այդ, ներկայացվել է հոգեբուժության էությունը, հոգեկան առողջության խնդիրների դրսևորումները, ինչպես նաև քննարկվել են սոցիալ-հոգեբուժական համագործակցության հնարավոր եղանակները:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

✚ Անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված հանդիպումները լուսաբանվել են կազմակերպության ֆեյսբուքյան էջում:

Հղումը՝

<https://www.facebook.com/MissionArmenia/photos/pcb.2913435418957124/2913433558957310>

✚ **Օրենսդրական առաջարկներ**

- «Հաշմանդամություն ունեցող անձանց ներառման 2022-2027թ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը
- «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը

Հղումը՝

<https://www.e-draft.am/projects/4046/digest>

<https://www.e-draft.am/projects/4043/digest>

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Ծրագրային առաջարկը ներկայացնելիս հարկ է առավել երկար ժամանակահատված նախատեսել նախապատրաստական փուլին՝ շահառուների հետ ծանոթացմանը, կարիքների խորքային գնահատմանը, անձնակազմի՝ միմյանց հետ փորձի փոխանակմանը:

✚ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ծրագրերից մեկի շրջանակում կազմակերպված «Ուղեգրման գործընթացի անխաթար կազմակերպումը՝ որպես ծառայությունների ստացման երաշխիք» հանդիպում-քննարկման ընթացքում ներկայացվել և քննարկվել են նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ուղեգրման գործընթացում առկա խոչընդոտները:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

- Կարիքների գնահատում
- Շահառուի սոցիալական վերականգնման անհատական ծրագրի կազմում
- Կենցաղային սպասարկման ծառայությունների տրամադրում
- Շահառուների սոցիալական կարողությունների և հմտությունների, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների ուսուցանում և զարգացում
- Կերակրի պատրաստման, կերակրման կամ բարեգործական ճաշարանի կերակրի տուն բերման ծառայությունների տրամադրում՝ ըստ ռեսուրսի
- Շահառուին ուղեկցում անհրաժեշտ վայրեր, բժշկական հաստատություններ
- Շահառուի անձնական հիգիենայի պահպանման հետ կապված ծառայությունների տրամադրում
- Աշխատանքային թերապիայի, արտթերապիայի կազմակերպում
- Անհատական հոգեբանական օգնության տրամադրում
- Սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնության տրամադրում շահառուին
- Սոցիալ-հոգեբանական խորհրդատվական օգնություն ցուցաբերում ընտանիքին
- Հոգեբույժի պարբերական հսկողության և խորհրդատվության տրամադրում
- Շահառուի դեղերի ստացում և տրամադրում շահառուին՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղերի ճիշտ և ժամանակին ընդունման մշտադիտարկում
- Բարդ դեպքերի քննարկում, հաջորդ ամսվա աշխատանքների պլանավորում
- Փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում
- Միջոցառումների իրականացում՝ ուղղված անձանց սոցիալական ներառմանը, համայնքային կյանքին մասնակցությանը,
- Բժշկական օգնության կազմակերպում
- Իրավաբանական աջակցության տրամադրում, իրավունքի ոտնահարման դեպքերի բացահայտում և իրավաբանական խորհրդատվության տրամադրում
- Թիմային քննարկումներ
- Դասընթացներ մասնագետների համար
- Սուպերվիզիոն ծառայություն

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

- ✓ Որոշ շահառուներ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կողմից ստացել են հումանիտար աջակցություն՝ հագուստ, տակդիր և այլն: Բացի այդ, դեպքի վարման շրջանակներում, սոցիալական աշխատողների ջանքերով գործընկեր կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության արդյունքում նրանցից շատերը կարողացել են ընդգրկվել տարբեր ծրագրերում, ստանալ անհրաժեշտ աջակցություն:
- ✓ Շահառուների մեծ մասի համար կազմակերպվել է այցելություն «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ցերեկային կենտրոններ, որտեղ նրանք մասնակցել են տեղի ունեցող հանդիպումներին, միջոցառումներին:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
<div style="display: flex; justify-content: space-between; align-items: center;"> <div>_____</div> <div>Ս. Մուրադյան</div> </div> <div style="display: flex; justify-content: space-between; align-items: center;"> <div>(ստորագրություն)</div> <div>Կ. Տ.</div> </div>	<div style="display: flex; justify-content: space-between; align-items: center;"> <div>_____</div> <div>Ե. Մխիթարյան</div> </div> <div style="display: flex; justify-content: space-between; align-items: center;"> <div>(ստորագրություն)</div> <div>Կ. Տ.</div> </div>